

## ՄԱՐԴՈՒ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Մարդու երկրային կյանքը բաժանվում է տարբեր ժամանակահատվածներին կապված նրա ֆիզիկական, մտավոր զարգացման, գործունեության, հասարակության մեջ ունեցած դիրքի և այլ գործոնների հետ, որոնք, վերջին հաշվով, պայմանավորում են մարդ-իրականություն հարաբերությունը: Ժամանակային այդ հատվածի լեզվական անվանումներն իրենց բաղիմաստային կամ ստուգաբանական հիմքով այս կամ այն չափով բնութագրում են տվյալ տարիքային ժամանակահատվածի բնորոշ կողմը (կողմերից մեկը):

Սեզ հետաքրքրող իմաստային խմբի նախագրային շրջանի տվյալները բավականին սուղ են, ինչ վերաբերում է գրաբարին, ապա այս շրջանում տարիքային անվանումները ներկայանում են բազմազան ձևերով, բնիկ և փոխառյալ շերտերի տարբեր հարաբերակցումներով: Գրաբարում տարիքային ընդհանուր անվանումներն են **տի/ք/** և **հասակ** բառերը. երկուսն էլ հ.-ե. ծագումով բնիկ հայերեն բառեր են՝ գործածության հնագույն ակունքներով:

Նշված բառերի տարիքային կոնկրետությունն ի հայտ է գալիս միայն այլ հուշող բառերի հետ գործածվելիս. հմմտ. մանկագույն տիվք /ՆՉԲ/: «Չասակ իմ ծերասցե» /ՆՉԲ/: **Դեռատի, նորատի, դեռահասակ, նորահասակ** և այլն: Գրաբարում **տարի /ք/** — «հասակ», «տարիք» բառը չկա:

Տարիքային անվանումների ժամանակային ընդգրկման պարզագույն շղթան **մանուկ-երիտասարդ-ծեր**-ն է: Մանուկ-երիտասարդ շղթայի միջանկյալ օղակն է **պատանի**-ն, որը որոշակիորեն սահմանազատված չէ շղթայի աջ և ձախ եզրերից: Նկատենք, որ կան բառեր, որոնք (հատկապես հականշության դեպքում) արտահայտում են տարիքով «մեծ» կամ «փոքր» իմաստը. հմմտ. աւազ (երեց)-կրտսեր (փոքր), վարդապետ-աշակերտ, ծնող-որդի, ... սակայն այս դեպքում միշտ չէ, որ որոշակիանում են տարիքային սահմանները: Օրինակ՝ **աւազ եղբայր-կրտսեր եղբայր** գույզում որոշակի է միայն առաջինի տարիքով մեծ, երկրորդի փոքր լինելը, բայց եղբայրների տարիքային որ խմբին պատկանելն առանց համատեքստի պարզ չէ:

Անդրադառնալով տարիքային խմբերի անվանումներին:

### Ա) ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Այս խմբի հիմնական և ամենահաճախական բառը **մանուկ**-ն է: Ծագում է հ.-ե. \*moṣu-ից: **Մանուկ** բառը նաև բառակազմական գործունե է՝ մանկանալ, մանկամայր, մանկտի, մանկակալ, մանկապես, մանկակոտոր, գեղեցկամանուկ և այլն:

Գրաբարում (թերևս նաև նախագրային շրջանում) հաճախական մանուկ բառը զարմանալիորեն սակավ գործածական է բարբառներում:

ԵՅԲ-ն մանուկ-ը մեկնում է. 1. «տղայ մանրիկ եւ երախայ նորածին, կամ սակաւահասակ. զաւակ, որդի», 2. «որպէս պատանի երիտասարդ, ժիր. ծառայ. սպասաւոր. զինուոր. զօրական քաջ», 3. «փոքր. փոքրիկ. մանր և մանկական»:

Բառարանի նշած բառիմաստներից ակնհայտ է, որ հիշյալ բառը երբեմն «կրտսեր» տարիքի չափանիշ չէ և եզրեր ունի պատանի, երիտասարդ տարիքային խմբերի հետ: Իսկ ընդհանուր առմամբ այն բնորոշ է կրտսեր տարիքային խմբին. այս դեպքում էլ երբեմն կոնկրետ ժամանակային սահմանն է խախտւում. մանուկ է և՛ արգանդում գտնվողը, և՛ ծնկերը, և՛ տասներկու տարեկան տղան, որ կարող է ամուսնանալ և սերունդ ունենալ: «Խաղաց մանուկն յորովայնի նորա» (Ղուկ. Ա 41): «Քանզի մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ» (Եզն. 49): «Եւ մինչ դեռ մանուկն էր (Յուսիկ) յետ միանգամ առաջնում զհիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն» (Բուզ. 10): (Ըստ Բուզանդի հաղորդածի՝ Գուսիկը տասներկու տարեկանում արու զավակ է ունեցել): Մանուկը կարող է և քաջ նետածիգ լինել. «Այս Վարազդատ էր տիովք մանուկ, սրտեայ... և յոյժ կորովի նետածգութեամբ» (Խոր. 308):

Եզնիկից քաղված հետևյալ օրինակներում էլ մանուկ/մանկագոյն – «անչափահաս» իմաստը չունի, այլ թերևս՝ «պատանի, երիտասարդ». «Մանուկ կրօնաւոր որ ոչ է առ ոտս ծերոց, անջան որս է սատանայի»: «Մանկագոյն կրօնաւորի մի ասէր զծածուկսն քո, զի մահ էն նորա» (Եզն. 302):

Եղիշեն գրում է. «Մի ոմն մանկագոյն ի նախարարացն ասէ» (13): Դաջորդ տողում մանկագոյն-ի փոխարեն պատանեակ է:

Մանուկ բառի հաճախական և նրբերանգային իմաստների առկայությունը հաստատվում է Ա. զրքի օրինակներով, որոնք նաև բացահայտում են թարգմանական որոշ յուրահատկությունները:

Նկատելի է, որ հունարենի բազմիմաստությունից հայերենը նախընտրում է մանուկ բառը: Դմմտ. «Միթէ կարող էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել» (Ղուկ. Ե 34): Գունական բնագրում ընդգծվածի համապատասխանակը νεοσ – ն է՝ «որդի, տղա»: Ռուսերենում նույնպես сын –ն է: «Խաղաց մանուկն յորովայնի նորա» (Ղուկ. Ա 41). Գուն. βρεφοσ – «նորածին», նաև «տղա», ռուս. младенец: «Տէր, մանուկ իմ անկեալ կայի տան անդամալոյծ» (Մատթ. Ը 6):

Գուն. παισ – «երեխա, պատանի, ստրուկ», ռուս. чужа: «Ահա մանուկ իմ զոր ընտրեցի» (Մատթ. Ժբ 18): Գուն. παις, ռուս. отрок – «պատանի»:

Թեև գրաբարյան վկայությունների (ոչ միայն բառարանային) մեծ մասում մանուկ-ը արու երեխան է, բայց այն կարող է նշել նաև հակառակ սեռը. «Ձի

ցուցցեթ մանուկն ասել և կոյս և աղջիկ նոյն միտք են» (Ոսկ. Մատթ. Ի. 71): Երբեմն սեռային տարբերակումը կատարվում է այլ բառերի միջոցով. «Իսկ ընդէ՞ր ի ծնանել **արու** մանկանն նստի նա զբառասուն օր ... և ի ծնանելն էգ մանկանն զութսուն օր» (Եփր. Մատ. 213): **Մանուկ** բառով կազմված **մանկամարդ**-ը միայն իգական սեռ է մատնանշում:

Կրտսեր տարիքային խմբի մյուս հաճախական բառը **տղայ**-ն է: Ըստ ՆՅԲ-ի ունի 1. «մանուկ փոքր. երախայ. սաղմն. մատաղ տիօք», 2. «տհաս տիօք. մատաղ. կրտսեր. տխմար. փոքրիկ», 3. «պարզամիտ. անգէտ. տգէտ»: Բառը փոխառնալ է ասորերենից: Փոխառու լեզվի համեմատությամբ հայերենում բառը իմաստային զարգացում է ապրել:

Գրաբարում, ըստ իության, բառը սեռային տարբերակվածություն չուներ, այն որպես կրտսեր տարիքի ցուցիչ վերաբերում է երկու սեռերին էլ, թեև ավելի հաճախ արական սեռին: Բերենք քնագրային որոշ օրինակներ. «Եւ կային շուրջ զծնօտիւք սկուտեղն անթիւ բազմութիւնք տղայոց արուաց, այլ սակաւ և իգաց» (Փարպ. 30): «Եւ ի ծեմն արու տղայոցն շինեցին նոքա զազգսն իբրեւ զտուն» (Եփր. Մատթ. Ի. 135):

**Տղայ** հասկացության ժամանակային սահմանը առավել ընդգծում է արտահատվում որոշակի համատեքստերում. «Արդ զոր օրինակ մերժէ երիտասարդութիւն զտղայութիւն եւ ծերութիւն զերիտասարդութիւն... որպէս մերժեաց անցոյց կրտսերութիւն զանդրանկութիւն» (Եփր. Մատ. 207): «Եւ զմանկտին, զոր տեսանէի ի տիս տղայութեան, առժամայն վաղվաղակի փոփոխեալք ի հասակ երիտասարդութեան կատարեալք լինեն» (Փարպ. 30): «... Դարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին, բայց ի տղայոց ստեղծիացաց...» (Խոր. 210):

**Երախայ** բառի հիմնական իմաստը «անկնունք, չկնքված»-ն է: «Մանուկ, փոքրահասակ» իմաստով բառը վաղ գրաբարում այնքան էլ հաճախական չէր: Իրանական *raxig* - «երեխա, փոքրիկ» գայթակղիչ զուգահեռ է, բայց բառաձևը և իմաստը անմիջական փոխառության օգտին չեն խոսում. թերևս միշտ է Գր. Աժառյալը՝ ենթադրելով ասոր. \**raxa* ձևը «որից փոխառյալ են մի կողմից հայ. երախայ, մյուս կողմից պիլ. *raxik* ձևերը» (Տես Արմ. Երախայ բառահոլովածը): Երախայ - «մանուկ» իմաստը ամենայն հավանականությամբ ձեռք է բերվել հետագայում, քանի որ չկնքվածները հիմնականում երեխաներն են, իմաստափոխությանը անշուշտ նպաստել է նաև իրանական *raxik*-ը: Պատահական չէ, որ **Երախայ** բառը տարբեր ձևերով առկա է միայն արևելյան տարածքի բարբառներում (Ղարաբաղ, Ագուլիս, Մեղրի...), որոնցում իրանական տարրը (նաև անմիջական չփումներով) բավականաչափ մեծ է:

**Աղջիկ**-ը սեռայինից զատ նաև տարիքային ցուցիչ է՝ հատկապես **աղջիկ-կին**, **աղջիկ-պառաւ** հակադրության մեջ. **Աղջիկը** տարիքային առումով կարող է լինել «երեխա», «երիտասարդ». բայց **աղջիկ-կին** հակադ-

րության մեջ այն ավելի կրտսեր է, քան կինը ամուսնացածը, առնակինը: Վերջինս հաճախական է Ս. զրքում:

Արմ-ում **աղբիկ** բառը ստուգաբանված չէ: Գ. Տահուկյանը ծագած է համարում հ.-ե. \*թə-li-ից<sup>3</sup>: Վ. Համբարձումյանը, հիմք ընդունելով Գամկրելիժեի և Իվանովի այն դրույթը, թե հ.-ե. բարբառների մի մասում «կին» գաղափարը առնչվում է «աղալ, հատիկը մանրել» նշանակությանը, **աղբիկ**-ը բխեցնում է հ.-ե. \*al- «աղալ»-ից<sup>4</sup>:

**Համբակ** բառին ՆՀԲ-ն վերագրում է «նորածին, դեռաբոյս հասակաւ, երախայ, տղայ», նաև «մանուկ, պատանի, երիտասարդ» իմաստները: Արմ-ը «պատանի» և «երիտասարդ» իմաստը չի նշում: Մեզ ծանոթ վկայություններում **համբակ**-ը փոքր տարիք է մատնանշում: Սյոպես եմ և ՆՀԲ-ի վկայած օրինակները:

Կրտսեր տարիքային խմբի անվանումներում կան մի շարք բառեր էլ, որոնք եզակի վկայություններ են, գուցե և աղավաղ կամ անստույգ:

**Աղածրի** բառը ՆՀԲ-ն համարում է «բառ անյայտ՝ իբրև երախայ, մատաղ» և բերում է միակ օրինակը. «Անկեալ աղաչեն աւասիկ ամենայն աղածրի երամ-երամ բազմութիւն տղայոց» (Գ. Մակ. Զ 12):

**Աղփու**ն բառով ՆՀԲ-ն դարձյալ բերում է մեկ օրինակ՝ ուշ գրաբարից. «Ի դեռաբոցբոջ և յաղփուս հասակին»:

**Ծիղ**ն բառն էլ եզակի վկայություն ունի. «Թող աճեսցի մանուկս և զարգացի փոքր մի ճիղն և մատաղ հասակն»: Բնագրային օրինակը Ոսկեբերանից է:

Արմ-ում բառը ստուգաբանված չէ: Աճողյանը այս արձատի հետ է կապում նաև **ճղճիմ** – «փոքրոգի» բառը, նաև Ղարաբաղի բարբառում գործածվող ճղձաղենք՝ /ճիղմ-աղիք/ «նրբաղիք, բարակ աղիքներ»:

**Ծիզ**-ը ՆՀԲ-ն չունի, Արմ-ն էլ քաղել է Երեմիա Մեղեքեցու բառարանից, թեև բնագրային վկայություն չկա, բայց բարբառային **ճիժ**-ը կարող է հաստատել դրա գոյությունը, այլ հարց է գրաբարում բառի ավանդված լինելը կամ գրաբարյան փուլում օգտագործվելը, մանավանդ որ այն ստուգաբանված չէ:

**Խորշ**-ը ՆՀԲ-ն չունի: Մագիստրոսի քերականության մեջ որպես հոմանիշ թվարկվում է փոքր տարիք նշանակող բառերի շարքում. «Տղայ դիեցիկ, ստնդեայ, տարրա. խորշ»: Ինքը Մագիստրոսը, նշում է, որ վերոհիշյալները սեռային տարբերակվածություն չունեն: (Տե՛ս Արմ. **Խորշ** բառահոդվածը):

**Տարրա**- (տես վերի օրինակը):

Կրտսեր տարիքի տարբերակումներն իրականացնում են նաև այլ բառերի ու բառակապակցությունների միջոցով. Օրինակ՝ ամենափոքրահասակներինը՝ **դիեցիկ, ստնդեայ, կաթնակեր** ... բառերով «Հարին գնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց» (Խոր. 210): «Լեզուը դիեցիկ մանկանց» (ՆՀԲ): Գրաբարում կա և **ստենահատոյց** բառը: ՆՀԲ-ն բերում է

**ստնահատոյց** ձևը Ոսկեբերանից վկայված եզակի օրինակով: Ստնահատոյց նշանակում է «կրծքից կտրած, այլևս մոր կաթով չսնվող»: Եփրեմ Ասորու գործերից մեկում կա **ստնահատոյց** բառը. «Ձի որ արար զնոսա յղիս, արասցէ զնոսա մանկունս, որ արասցէ զնոսա ստնահատոյցս, արասցէ զնոսա պատանիս, որն արար զնոսա երիտասարդս, արասցէ զնոսա ծնրս և ալեւորս» («Սիրոն», 1928թ., էջ 187):

#### Բ) ՍԻՋԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Այս խմբի հիմնաբառերն են **պատանի** և **երիտասարդ**: Եթե ժամանակակից հայերենում այս երկու բառերի ժամանակային սահմանները որոշ չափով հստակ են, ապա զրաբարում վիճակն այլ է. **պատանին** մի դեպքում ներառում է կրտսեր տարքային խմբի մեջ, մեկ այլ դեպքում միջին: «Պատանի մի մանուկ երրայեցի» (ՆՅԲ): «Սեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն զնել հանդերձ իւրով կնան...» (Բուզ. 99):

Սի վկայություն կա և **կիսապատանեակ** բառով. «Քանզի ահա կիսապատանեակ էր» (Փիլ. Մճ. 436):

**Պատանի**—ն մաս սեռային տարբերակվածություն ունի՝ նշելով միայն արական սեռ: Այդպես է և **պարմանի**-ն, որը վաղ զրաբարում նվազ հաճախական էր:

**Երիտասարդ**-ը հիմնականում ներառվում է **պատանի-ծեր** շրջայի միջանկյալ օղակում: Բառի՝ բառարանային մեկնություններում էլ այդ ընդգծվում է: **Երիտասարդ**-ը միանշանակ մատնանշում է արական սեռ: Նույն տարիքի իգական սեռի դեպքում հանդես է գալիս այլ բառ, որոշ դեպքերում էլ օգտագործվում է **երիտասարդուհի**-ն: «Եւ զայս ոչ միայն զերիտասարդաց ասեմ, այլ և զկանանց և զաղջկանց» (Ոսկ. Մատթ. 710): «Պատանիք ոմանք իբր առ երիտասարդուհեօք ճեմիցեն» (Խոր. 39): «Երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց» (Եղիշ. 124):

Զրաբարում «երիտասարդուհի» իմաստը արտահայտվում է և **օրիորդ** բառով: V դարից բազմաթիվ վկայություններ կան, և ենթադրելի է նրա հաճախական գործածությունը նախագրային շրջանում: Եթե ճիշտ է Ղափանցյանի ստուգաբանությունը՝ ուրարտ. euri «տեր»+որդի, ապա նախապես բառը թերևս ունեցել է սոցիալական տարբերակվածություն, ինչպես **տիկին**-ը **տի** «մեծ»+**կին**: V դարում **օրիորդ**-ը ավելի հաճախ տաղիքային ցուցիչ է, իսկ **տիկին**-ը՝ դասային: Հմմտ. «Եւ հաճոյ թուեցաւ Սմբատայ, յդէ առ արքայն Ալանաց տալ զտիկին օրիորդն Ալանաց, զՍաթենիկ ի կնութիւն Սրտաշխի» (Խոր. 178):

**Երիտասարդ**-ը իրանական փոխառություն է: **Պատանի**-ն և **պարմանի**-ն հավաստի ստուգաբանություն չունեն: Ամենայն հավանականությամբ սրանք էլ իրանական փոխառություններ են. **Պատանի**-ի արմատը թերևս իրան. *lan* «մարմինն» է բառացի՝ «մարմին առած»:

**Պարմանի**-ի համար էլ առաջարկվել են տարբեր ստուգաբանություններ (տես Արմ), սակայն բառածնը, ապա և իրանագիտության որոշ նոր տվյալներ խոսում են բառի իրանական ակունք ունենալու օգտին: Սողոթերենում վկայված է բոմ'ո բառը, որի իմաստի հարցում արևելագետները համակարծիք չեն: Ըստ Ա. Փերիխանյանի՝ իրանական համատեքստում այդ բառին բնորոշ է այն իմաստը, որը առկա է հայերենում<sup>1</sup>: Եթե դա այդպես է, ապա V դարից վկայված **պարմանի** բառը պետք է համարել իրանական փոխառություն (թերևս պարթևական որևէ բարբառից անցած):

Որոշ վերապահությամբ այս ենթախմբի մեջ կարելի է ընդգրկել և **այր** բառը: Արմ-ը տեսնում է միայն «տղամարդ», «ամուսին» իմաստները: Ավելի ճիշտ է ՆՔԲ-ն՝ մշեղվ մաս. «չափահաս կամ կատարեալ. յարբուհս հասեալ. երիտասարդ և չի աւուրբք» իմաստները: Եթե **այր**-ի տարիքային սահմանը հստակ չէ **երիտասարդ-ծեր** շրթայում, ապա այն որոշակիորեն հակադրվում է «անչափահաս» ենթախմբին: Հմմտ. «Սինչ տղայն էի, իբրեւ գտղայ խորիէի, այլ իբրեւ եղէ այր գտղայութիւնն խափանցի» (Եզն. 232):

Այդ հակադրության հստակությունը հաճախ արտահայտվում է և այն հանգամանքով, որ **այր**-ը ունի և «ամուսնացած տղամարդ» իմաստը. «Կին երկնչիցի յառնէ իւրմէ»: «Անք, սիրեցեջ զկանայս ծեր» (ՆՔԲ):

Տարիքային այս խմբի մեջ ներառվում են նաև այլ կարգի բառեր: Այսպես՝ իգական սեռի դեպքում օգտագործվում է **առնակոյս-ը**՝ ի հակադրություն **առնակինի**-ի (**առնակոյս** մշանակում է «նշանված, չամուսնացած աղջիկ», իսկ **առնակին**՝ «ամուսնացած կին»): «Իսկ առնակոյսն որ ի խօսման կայ և առնակին յետ զլորման՝ սուր սուսերի կայ ի վերայ այնորիկ, որ անկանին» (Եփր. Սատ. II. 275):

**Առնակոյս-առնակին**-ը զրաբարում հաճախական չէ, և ըստ երևույթին պատճենվում է թարգմանվող լեզվից: Նվազ հաճախական է և **աղջկամարդ**-ը, որը ՆՔԲ-ն մեկնում է «մանկամարդ, կին մանկահասակ կամ ծաղկահասակ»: Տարիքային այս նույն խմբի մեջ է մտնում և **մանկամարդ**-ը՝ մատնանշեղծվ իգական սեռ **պատանի-երիտասարդ** տարիքային սահմաններում. «Կամիմ մանկամարդացդ ամուսնանալ»: «Զպատաւունս իբրեւ զմարս, զմանկամարդս իբրեւ զքորս» (ՆՔԲ):

Վերոհիշյալ երկու օրինակները Սստվածաշնչից են (Ս Տիմ. ե 2,14): **Սանկամարդ**-ը հուն. νεωτερος-ի /νεοσ-«պատանի, երիտասարդ»/ թարգմանությունն է. ռուս. молодые, молодые люди: Զանի որ **մանկամարդ**-ը հանդիպում է և ինքնուրույն գրականության մեջ, ուրեմն ենթադրելի է, որ **իգական սեռի երիտասարդ տարիք** հասկացության դեպքում զրաբարում սովորաբար օգտագործվել է **մանկամարդ**-ը՝ համանիշ **աղջիկ**-ին:

Սստվածաշնչում «պատանի, երիտասարդ» իմաստով գործածվել է և

**գօտիածու** բառը. «...եւ ելին յամենայն գօտիածուաց եւ ի վեր եւ կացին առ սահմանաւ» (Դ Թագ. Գ 21): Բառը փոխաբերացված կիրառություն ունի և հարազատորեն ներկայացնում է բնագիրը. այդպես է և ռուսերենը. «начиная от носящего пояс...»: Փոխաբերացված է **և ջրթափեմ** – «արքունքի հասնել» բառը: «Բայց ծնաւ ապա Փառանձեմ ուստր մի և կոչեցին զանուն նորա Պապ և սնուցին և ի չափ հասուցին: Եւ իբրեւ ջրթափեաց և եղեւ հուժկու, ետուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց» (Բուգ. 104):

Տարիքային այս ենթախումբը համալրվում է և որոշ կապակցություններով (հարադրություններով). «Յդա իսկ հարցցէք, ինքնին **ի չափ հասեալ է**» (Յովհ. Թ 21): «Բայց **յարբուսն հասակի հասեալ** մանկանն փեսայացուցանէ...» (Խոր. 220): «Իսկ **ի հասակ և ի միտս հասեալ** որդւոց նորա յիշեցուցանեն նմա զայս» (Խոր. 55):

Գրաբարում **չափահաս** բառը չի գործածվել: Այդ նշանակությամբ հանդիպում ենք **հասակաչափ**, իսկ ուշ գրաբարում նաև **չափահասակ** բառերին:

#### Գ) ԱՎԱԳ (ԾԵՐ) ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՐԲԵ

Այս խմբի հիմնական անդամներն են **ծեր** և **պառաւ** բառերը. երկուսն էլ հաճախական V դարից: **Ծեր**-ը հ.-ե. ծագում ունի, իսկ **պառաւ**-ը իրանական փոխառություն է: Գրաբարից վկայված բազմաթիվ օրինակներով հաստատվում են **ծեր-պառաւ** սեռային տարբերակվածությունը. **պառաւ** գրաբարում նշանակում է «ծեր կին»: «Զծերն մի պատուհասիցես, այլ մխիթարեսցիր իբրեւ զհայր ...զպառաւունս իբրեւ զմարս...» (Առ Տիմ. ե 1):

Կարող ենք ենթադրել, որ նախքան **պառաւ**-ի փոխառելը **ծեր**-ը գործածվել է և «պառաՎ կին» իմաստով: Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ **ծերանալ**, **ծերութիւն** կիրառվում են և՛ «պառաՎ տղամարդու», և՛ «պառաՎ կնոջ» համար. Բերենք օրինակներ վերջին կիրառությամբ. «Եւ նա յղի էր ի ծերութեան իւրում» (Դուկ. Ա 36): «Դարձարուք, ղստերք իմ ...զի ես ծերացեալ եմ» (Յուռութ. Ա 12): Ուստիս էլ ելիմելէի կինը Նոոմին: Գրաբարում միայն եզակի դեպքեր կան, երբ կանանց ծերանալը, ծեր լինելը արտահայտվում է **պառաւել** բայով: «Թէ արդարեւ ծնանիցիմ, զի ահա ես պառաւեալ եմ» (ԾՆՆդ. Ժ 13): Աստվածաշնչում այլ դեպքերում օգտագործվում է **ծերանալ**-ը: «Եւ Աբրահամ և Սառա ծերացեալք են անցեալք զաւուրքք» (ԾՆՆդ. ԺԸ 11): Ա. գրքում **պառաւել** գործածված է մեկ անգամ, իսկ **ծերանալ** երեսուներ:

**Ծերունի**-ն վկայված օրինակների գերակշիռ մասում գործառու է արական սեռի իմաստով, սակայն կա և հակառակը. «Ահաւանիկ եղիսաբէք ազգական քո՝ ծերունի ամուլն հղի է» (Եփր. Մատ. 1836 թ., էջ 17):

**Ծեր** հասկացությունը, կապված տարիքի, փարձառության հետ, ենթադրում է բարություն, բարոյականություն և այլ առաքինի հատկանիշներ. «Իսկ

եթէ ծերութեանն նոյնպէս անառակ իցէ, զհարդ արժանի լինիցի այնպիսին ծեր անուանել, որ ոչ ի հասակէն և յայլեացն ակն ածիցէ» (Ոսկ. Պող. II 493): Վերջում բերենք քնավոր խոսքի արժեք ունեցող մի օրինակ **ծեր** բառով, որտեղ նաև հստակ հակադրվում են տարիքային շղթայի հիմնական միավորները: «Ծերն փառասիրէ, երիտասարդն հպարտանայ, մանուկն չհնազանդի: Ծերն կամի առնել և ոչ կարէ, երիտասարդն կարէ առնել և ոչ կամի, մանուկն և ոչ կամի և ոչ առնէ» (օրինակը Սանդակունուց է)\*:

**Ծեր-ծերունի-պառաւ** համանշային շարքը լրացնում է նաև **աւսարդ, գրայիդա, սաքա** բառերը, որոնք, ըստ բառարանային տեղեկությունների, վկայված են մեկական անգամ:

**Աւսարդ-ը**, ըստ ՆԳԲ-ի և Արմ-ի, ունի «պառավ կին» իմաստը՝ նկատի առնելով Փիլոնի միակ վկայությունը. «Եւ ոչ աղքկունս միայն, այլ զաւսարդս» (ՆԳԲ): Բառի եզակի վկայությունը հիմք չի տալիս հաստատապես պնդելու, թե **աւսարդ-ը** միայն «պառավ կինն» է (այդ չի հաստատվում նաև ստուգաբանական տվյալներով): Նկատենք, որ XII դ. վկայված մի օրինակում **աւսարդական-ը** նկատի ունի ոչ թե կնոջը, այլ տղամարդուն: «Եւ իբրեւ հասանէր ի տիս աւսարդական հասակին... տենչայր կարգի քրիստովնէից» (բնագրում խոսքը տղամարդու մասին է)\*:

**Սաքա-ն** աստրական փոխառություն է, իսկ **գրայիդա-ն**՝ հունական. վերջինս ՆԳԲ-ն չունի:

Բնիկ հայերեն արմատներով կազմված **զառամ** և **ալեւոր** բառերը նույնպես լրացնում են **ծեր** բառի հոմանշային շարքը: **Ձառամ-ը** վաղ գրաբարում հաճախական չէր, սակայն բառակազմական կաղապարը՝ զ-առ-ամ, հուշում է, որ բավականին հին կազմություն է:

**Ծեր** տարիք հասկացությունը արտահայտվում է նաև մի շարք հարադիր ծներով. «Ահաւաղիկ դու ծերացար և հասեր ի չափ աւուրց քոց» (Եփր. Մատ. 367): «Այլ ի մանկութեան ծերացելոց աղօթս առնել և ի բուն իսկ ի խոր ալիս հասանել» (Ոսկ. Մատթ. II. 711): «Եւ Դաւիթ էր ծեր և լի աւուրք» (Ա ՄՍ. ԻԳ 1): «Չի ես ծեր եմ և կին իմ անցեալ զաւուրք իւրովք» (Ղուկ. Ա 8): «Եւ Յեսու ծերացեալ էր և անցեալ զաւուրք» (Յեսու ԺԳ 1): «Վախճանեցաւ Յոր ծերացեալ և լցեալ աւուրք» (Յովք. ԽԲ 17): Պետք է կարծել, որ վերոհիշյալ ոճերը հայերենին բնորոշ չեն եղել. սրանք հիմնականում թարգմանական գործերից են՝ պատճենում-թարգմանություններ: «Լի աւուրք»-ը հուն. *πληρητος ημερας*-ն է:

Գիշտ է, ինքնուրույն գրականության մեջ էլ երբեմն հանդիպում ենք նման ոճերի, ինչպես «Երանելոյն Սահակայ լցեալ աւուրք» (Կոր. 86): Սակայն դա էլ ազդեցության արգասիք է, ինչպես անց. դերբայ + սեռ. հոլով կազմությունն ամբողջապես:

Ամփոփենք. գրաբարում մարդկային տարիք մատնանշող իմաստային խում-


բը ներկայանում է մի շարք բառերով ու կապակցություններով. համանիշային անդամների թվի տեսակետից ավելի բազմազան է «կրտսեր տարիք» իմաստա-  
յին ենթախումբը, որի հիմնաբառն է **մանուկ**-ը: Գրաբարում ավելի հստակ է **կրտսեր տարիք-ծեր տարիք** տարբերակումը: Միջին օղակի միավորների՝ միմյանցից, ինչպես նաև նախորդող և հաջորդող անդամներից տարբերակում-  
ներն այնքան էլ որոշակի չեն: Կարելի է կարծել, որ վաղմջահայերենում տարի-  
քային շղթայի միջին օղակը տարբերակված չի եղել. սա կողմնակիորեն կարե-  
լի է փաստարկել նաև այն հանգամանքով, որ շղթայի բոլոր միավորներն էլ ի-  
րանական փոխառություններ են, որոնք հայերեն են մուտք գործել ավելի ուշ:

### ՀԱՍՏՈՐՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արմ. – Զր. Աճառյան, Գայերեն արժատական բառարան, հ. 1-4, Ե., 1971-1979:  
Բուզ. – Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Գայոց, Ս. Պետերբուրգ, 1883:  
Եզն. – Եզնկայ Կողբացու Բագրեւանդայ եպիսկոպոսի եղծ աղանդոց. Վենետիկ, 1826:  
Եղիշ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Գայոց պատերազմին, Ե., 1957:  
Եփր. Սատ. – Ս. Եփրեմի մատենագրութիւնը, Վենետիկ, 1836:  
Խոր. – Սովսիսի Խորենացու Պատմութիւն Գայոց, Տփղիս, 1913:  
Կոր. – Կորիւն, Վարդ Սաշտուցի, Ե., 1941:  
ՆՅԲ. – Նոր քառօրը հայկազան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:  
Ոսկ. Սատ. – Յովհաննու Ոսկերբանի Յվետարանագիրն Սատրեոս, Վենետիկ, 1826:  
Ոսկ. Պող. – Յովհաննու Ոսկերբանի Սեկնութիւն թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862:  
Պատմ. Աղեքս. – Պատմութիւն Աղեքսանդրի Սակեղոմացու, Երևան, 1989:  
Փարպ. – Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Գայոց, Տփղիս, 1904:  
Փիլ. Սնաց. – Փիլոնի Երայեցու Մնացորդը ի հայս..., Վենետիկ, 1826:

### Ծանոթագրություններ

1. Գայերենի տարիքային անվանումների առաջին ամփոփ ու համակարգված քննությունը կատարել է Գ. Գալոբյանը: Աշխատանքում ամենաընդհանուր ձևով ներկայացված են հայերենի տարբեր փուլերում, այլև բարբառներում գործառուղ տարիքային անվանումները, արդի հայերենում այդ միավորնե-  
րի գործառության հաճախականությունը, փորձ է արված զատորոշելու տարիքային խմբերի սահմանագծերը: Գրքի ծավալի և նպատակադրմանը պայմանավորված՝ գրաբարին վերաբերող մասը որոշ առումով թերի է և ունի լրացման կարիք: (Տե՛ս Գ. Յակոբեան, Գայերենի տարիքային անուա-  
նումները, Եր. 1995):
2. Ամ և տարի բառերի գործառական և իմաստային առանձնահատկություն-  
ների մասին տե՛ս Լ. Գովհաննիսյան, Տարի հասկացություն արտահայտու-  
թյունը հին հայերենում, «Լեզու և լեզվաբանություն», 1, 2003, էջ 20-25:
3. Տե՛ս Գ. Ջախուկյան, Գայոց լեզվի պատմություն, Եր. 1987, էջ 145:
4. Գամբարծումյան, Ալևարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտու-  
թյան, I, Եր., 1998, էջ 31:



5. А. Периханян, Общество и право Ирана в парфянский и сасанидские периоды, М., 1983, стр. 76-77.
6. Գ. Տեր-Սիրուդյան, Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Բ., Ա.Էդմիսթոն, 1998, էջ 266:
7. Ա.Ա., էջ 64:

Լ. ՕԳԱՆԵՅԱՆ

## СЛОВА, ОБОЗНАЧАЮЩИЕ ВОЗРАСТ ЧЕЛОВЕКА, В ГРАБАРЕ

В статье рассматриваются все обозначения возраста человека, их этимология и функционально-семантические особенности в грабаре. Из обозначений младшего возраста самым частотным является слово *manuk* "дитя, ребенок", которое, судя по употреблению в письменных памятниках, иногда примыкает к группе обозначений среднего возраста. В большинстве употреблений слово *manuk* указывает на мужской пол, редко — также на женский. Заметно, что армянские переводчики Библии в ряду греческих синонимов отдают предпочтение слову *manuk*. Из группы обозначений среднего возраста основными являются слова *patani* и *yeritasard*. Первое относится только к мужскому полу. Данные слова являются иранскими заимствованиями. Слова *aghikamard*, *mankamard*, *arnakoue*, *gotiatsu*, также указывают на средний возраст. Последнее слово засвидетельствовано в Библии (Царство, гл. 21), оно является калькой с греческого, ср. рус. "...машинная от носящего пояс...".

В группе обозначений старшего возраста основными являются слова *tser*, *paraw*. Последнее обозначает только старую женщину. Слово *awzard*, зафиксированное лишь в одном употреблении, словари грабара толкуют как "старая женщина", однако, употребляемое с XII в. слово *awzardakan* обозначает мужчину. Впрочем, в языке, из которого это слово заимствовано, оно не указывает на отличие по полу. Синонимический ряд слов этой группы дополняют также образования с и.-в. корнями: *zaram*, *alevor*.

Засвидетельствованные слова позволяют предположить, что единицы, указывающие на средний возраст, в лексическом плане четко не ограничены друг от друга, а также от ряда обозначений предшествующей и последующей цепи.

Можно предположить, что в раннеармянском не было обозначений среднего возраста.

Լ. ՈՎԿԱՆԻՍՅԱՆ

## WORDS DENOTING AGE IN GRABAR

The article discusses the etymology and functional-semantic features of all the words denoting age in Grabar. The junior age is presented with the most frequent word *manuk*, meaning mostly male youth. The middle age mainly uses the Iranian loan words *patani* and *yeritasard*. The senior age is more denoted by the words *tser*, *paraw*, and less by the synonyms *zaram*, *alevor*. The analysis allows the inference that Armenian did not have its own words denoting words of the middle age.